ՊՈՆՏՈՍԻ ՀԱՅԵՐԻ ՎԱՐՈՂ ԴՈՐՄԻՔՆԵՐԸ

Պատմ. գիտ. դոկտոր Վ. Հ. ԲԴՈՅԱՆ

Պոնտոսի բնիկ ցեղերի և նրանց հողագործական զբաղմունքների վերաբերյալ տեղեկությունները խիստ աննշան են։ Ստրաբոնն իր «Աշխարհագրություն» աշխատության մեջ հիշատակել է մի շարք ցեղերի անուններ, որոնք հիմնականում որսորդներ, ձկնորսներ և հավաքիչներ (собиратели) են եղել։ Այդ ցեղերից են՝ ապպիտները, խալիբները, խաղտիները, տիբարենները և այլն։ Ստրաբոնի արտահայտություններից երևում է, որ երկրագործությունն այստեղ երկրորդական զբաղմունք էր։ Նրա հաղորդմամբ այդ ցեղերը ձկնորսական սեզոնն ավարտելուց հետո միայն բարձրանում էին խիտ անտառներով ծածկված բարձունքները և մշակում խղճուկ հողերը[1]։ Փառնակիայի ցեղերը,— գրում է նա,— որ ապրում էին գաղանների մսով և ծառապտուղներով, այդ տեղերում հողի միայն աննշան մասն էին մշակում[2]։ Ցավոք, Ստրաբոնը մեզ չի հուշում, թե այդ ցեղերը ի՞նչ գործիքներով էին մշակում հողը։ Կարելի է միայն կռահել, որ մինչև հույների և հայերի այս երկիրը մուտք գործելը բնիկներին հայտնի է եղել անտառահատական հողագործությունը՝ բրիչային տեխնիկայով։

Ինչպես վկայում են սկզբնաղբյուրները, հայերի արտագաղթերը դեպի Պոնտոս տեղի են ունեցել դեռևս մ. թ. ա. II դարից սկսած։ Ըստ Ստրաբոնի՝ «Փառնակիայի ու Տրապիզոնի գավառներից վերև, մինչև Փոքր Հայք, գտնվում են տիբարենացիք և խաղտիք։ Փոքր Հայքը բավական բերրի երկիր է։ Ծոփաց նման, սա էլ ունեցել է միշտ իր բնիկ իշխանները, որոնք մերթ Մեծ Հայոց բարեկամ էին և մերթ ինքնագլուխ։ Իրենց հնազանդ էին խաղտիք և տիբարենները, այնպես որ իրենց իշխանությունը տարածվում էր մինչև Տրապիզոն և Փառնակիա»[3]։

Հաստատվելով Պոնտոսում, Փոքր Հայքի իշխաններն այնուհետև իրենց տիրույթները մեծացնելու և դրանք պահպանելու նպատակով Պոնտոս էին ներքաշում նաև Մեծ Հայքից դեպի արևմուտք տեղաշարժվող հայկական առանձին խմբերին։ Իսկ այդպիսի կամավոր տեղաշարժեր տեղի են ունեցել դեռևս Տիգրան Մեծի թագավորության շրջանից սկսած։

Ինչպես վկայում են հունական ու հայկական սկզբնաղբյուրները, նման «կամավոր» տեղաշարժերն ու հարկադրական արտագաղթերը մեծ չափերի են հասել մասնավորապես պարսկական, արաբական և բյուզանդական տիրապետության ժամանակաշրջանում՝ սկսած V դարից մինչև XI դարը։ Իրենց բռնատիրության ժամանակ պարսիկներն ու արաբները ձգտել են հայկական սահմանակից շրջաններից հեռացնել հայերին դեպի բյուզանդական սահմանները,

---

1 Страбон, География, М., 1964, էջ 471։

2 Նույն տեղում, էջ 515։

3 Страбон, նշվ. աշխ., էջ 521։ Հայերեն թարգմանությունը՝ Հր. Աճառյանի (տե՛ս Ստրաբոն. բաղկ և թարգմանեց Հր. Աճառյան, Երևան, 1940, էջ 75)։

իսկ գերեվարածներին ձուլել իրենց հետ։ Այդ կերպ դատարկված հայկական շրջաններում նրանք վերաբնակեցնում էին իրենց ժողովուրդներին։ Հայկական այդպիսի տեղաշարժերից հիշատակենք երեք օրինակ։

Հուստինիանոս II-ը 688 թ. Հայաստանը, Վրաստանը, Աղվանքը և Մարաստանը տիրելուց հետո Բյուզանդիա գերեվարեց 8000 հայ ընտանիք[4]։ 751 թ. բյուզանդական Կոստանդին Կոպրոնիմոս կայսրը Մելիտենեն, Գլոտիասը (Գլոտիապոլիս—Claudias) և Զորրորդ Հայքը գրավելիս այդ տեղերից մեծ թվով հայերի տեղափոխեց Բյուզանդիա[5]։ VIII դարի վերջում (հավանաբար 788 թ.) արաբական հալածանքների հետևանքով հայերի մեծ տեղաշարժ եղավ Արագածոտն գավառից (Արագածի ստորոտներից և Արարատյան հովտից)։ Տասներկու հազար հայերի ղեկավարությունը հանձն առնելով, Շապուհ Ամատունի իշխանը իր Համամ անունով որդու հետ հասավ Պոնտոս և ժողովուրդը տեղավորեց պատմական Խաղտիքի տերիտորիայում։ Այստեղ իշխանության գլուխ կանգնած Համամ իշխան Ամատունին բերդ-քաղաք կառուցեց և այն անվանեց Համամաշեն, որը սովորաբար կրճատ Համշեն է հորջորջվում[6]։ Այդ նույն Համշեն անունը տարածվել է ինչպես հայերի զբաղեցրած երկրամասի, այնպես էլ ժողովրդի վրա, որով մինչև այսօր էլ նրանք համշենցի են անվանվում։

Այսպիսով, VIII դարում հայ գաղթականությունը Կապադովկիայում, Պոնտոսում և այլուր մեծ տարածություններ է զբաղեցրել։ XI դարի հույն պատմագիր Կեդրենոսի հաղորդմամբ Պոնտոսում այնքան շատ հայեր էին կենտրոնացել, որ երկրի նախկին անունը մոռացության էր մատնված[7]։ Հայտնի է, որ VIII դարից մինչև XI դարը հայերը Բյուզանդիայի մի շարք շրջաններում ձեռք էին բերել բավական ազդեցիկ դիրք, տվել երկիրը կառավարող թագավորներ, ունեցել զինվորական կազմակերպություններ, ֆեոդալական հաստատություններ և այլն։ Հայ և այլազգի բնակչության աճի հետևանքով Բյուզանդիայի Լևոն III կայսրը, իր գահակից Կոստանդին որդու հետ հրապարակում է «Երկրագործության օրենքները» («Homos georgikas»)։ Դրանցով կարգավորվում են հողօգտագործման իրավունքները։ Ուշագրավ է այն հանգամանքը, որ նոր գաղութներ կազմած հայերին որոշակի արտոնություններ են տրվել։ Նրանք ստացել են անձնական ազատություն։ Երկրագործներից կազմվել են հատուկ հայկական հողային համայնքներ։

Պոնտոս-Համշենում, ինչպես նաև Տրապիզոնի նահանգում, զբաղվելով հիմնականում դաշտավարությամբ, հայերը կերպարանափոխեցին պոնտական երկրագործության ձևերը։ Նրանք իրենց հետ այդ աշխարհը տարան վարող պատրաստի տեխնիկան և այն հասցրին զարգացման նոր աստիճանի։ Հայկական Պոնտոսում երկրագործական գործիքները կրել են որոշակի փոփոխություններ, հարմարեցվելով միանգամայն նոր բնակլիմայական պայմաններին։ Անդրադառնանք պոնտահայերի վարող գործիքների ձևերին և դրանց էվոլյու-

---

4 «Ստեփանոսի Ասողկան Պատմութիւն տիեզերական», Պետերբուրգ, 1885, էջ 100. հմմտ. Արշակ Ալպոյաճյան, Պատմություն հայ գաղթականության, Կահիրե, 1941, էջ 228։

5 Ա. Ալպոյաճյան, նշվ. աշխ., էջ 229—230։

6 «Պատմութիւն Ղևոնդեայ», ՍՊԲ, 1887, էջ 168—169։ Ստեփանոս Ասողիկ, էջ 134։

7 Ա. Գ. Աբրահամյան, Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, Երևան, 1964, էջ 51։

ցիային։ Ազգագրական փաստերը քաղել ենք Պոնտոսից գաղթած բնակչության այն հատվածներից, որոնք այժմ ապրում են Սովետական Միությունում, Սև ծովի ափերին։ Նրանց մեծ մասը բնակություն է հաստատել Աջարիայի, Արխալիայի, Սոչիի, Տուապսեի շրջակայքի և այլ տեղերի գյուղական բնակավայրերում և XIX դարի 80-ական թթ. մինչև XX դարի 40-ական թթ. շարունակել է գործածել իր հին արորները։ Այս նոր վայրերի բնակլիմայական պայմանները շատ քիչ են տարբերվում Պոնտոսից, որը ևս նպաստել է վարող տեխնիկան նույնությամբ պահելու գործին։

Ահա այդ տեխնիկան.

1. Աղձնիքյան տիպի արոր (տախ. I—1), որը գրեթե նույնությամբ կրկնում է Սասունի պոշիկ հարոր-ի (տախ. I—2) կառուցվածքը[8]։ Պոնտական հարորը նման է նաև Ծոփքի որոշ արորների[9]։ Աղձնիքյան հարորի խոփը նման է Չորրորդ Հայքի, Սյունիքի և Արարատյան հովտի արորների խոփերին։ Այդ խոփը օժտված է լայն ականջներով, որոնք կարևոր դեր ունեն թփերի առմատները ոչնչացնելու գործում։ Սասունում արորի խոփը չունի այդպիսի ականջներ, ուստի և Այրարատից կամ մյուս նահանգներից Պոնտոս գաղթած հայերի միջոցով խոփին նոր ձև է տրված։

Ինչպես նկատել է Հ. Մուրադյանցը, պոնտա-հայկական հարորը 1880-ական թթ. սկսած նույն դերն էր կատարում նաև Սև ծովի հյուսիսային ափերի լեռնային մասերում։ Նա գրում է, թե այդ հարորը «առհասարակ հեշտ ու թեթև է բանում։ Համարձակ կարելի է ասել, որ այնպիսի խորդուբորդ, քարքարոտ ու անհարթ տեղերում, ինչպես կովկասյան ու հայրենական (պոնտական) ափերի հայերի նստած տեղերն են, նրանց արորը մեծ հարմարություն ունի երկիրը մշակելու համար»[10]։ Այդ արորի «ներքևի կողմը,— շարունակում է տեղինակը,— գետնին մոտիկ, մի փոքրիկ տախտակ է մեխված՝ ակոսի հողը մի կողմ թափելու համար»[11]։ Սասունում, սակայն, այդ թև-տախտակը չի եղել, այն առաջացել է Պոնտոսի նոր պայմաններում, անշուշտ VIII դարից հետո, ավելի քան մեկ հազարամյակի ընթացքում։ Տախտակի առաջացումը հասարակ արորի վրա՝ մի նոր փուլ է դեպի նախագութանը տանող ճանապարհին։

Աղձնիքի Սասուն գավառի այս հարորատիպի մաճն ու առատամը միակտուր փայտից են պատրաստվում։ Այն հաճախ շինվում էր ծառարմատից և վերջինիս շարունակությունը կազմող ծառաբնից, որը գործիքին բավական կայուն ամրություն էր հաղորդում։

2. Պոնտոսի հարորի երկրորդ տիպը (տախ. I—3) աննշան տարբերությամբ կրկնում էր Չորրորդ Հայքի հարորի (տախ. I—4)[12] կառուցվածքը։ Աչիս և Իրիս գետերի հովիտներում և մանավանդ Պոնտոսի լեռնոտ վայրերում այս հարորի մաճն ու առատամը նույնպես միակտուր փայտից էին պատրաստվում։ Սրա նախատիպը XIX դարի կայուն վիճակով տարածված ենք գտնում ոչ միայն Չորրորդ Հայքի գավառներում, այլև ամբողջ Կիլիկիայում, Հայկական

---

8 Տե՛ս В. А. Бдоян, Земледельческая культура в Армении (автореф.), Тбилиси, 1968, էջ 62, նկ. C։

9 Նույն տեղում, նկ. AB։

10 Հ. Մուրադյանց, Համշենցի հայեր. ազգագրական նյութեր, «Ազգագրական հանդես», IV, էջ 132։

11 Նույն տեղում, էջ 132։

12 В. А. Бдоян, նշվ. աշխ., էջ 62, նկ. A։



Տախտակ I

Տավրոսի հարավահայաց կողմերում, Փոքր Հայքում, Փոքր Ասիայի, Սիրիայի հայկական գաղթավայրերում և այլուր՝ ամենուրեք հարոր հորջորջմամբ։

Պոնտոսի նոր բնակլիմայական պայմանների և Մեծ Հայքի տարբեր նահանգներից այստեղ հաստատված հայերի բերած փորձի հիման վրա այս գործիքն օժտվել է երկաթե ձևիչով։ Ձևիչի անցքը կրկնակի լայն էր, որպեսզի այնտեղ զետեղվեր նաև կարդավորիչ սեպը։ Ըստ որում, սեպի միջոցով ձևիչը աջ թեքվելիս հավասարվում էր առատամի աջ եզրագծին ու առատամի հետ գրեթե հավասար ճեղքում հողը և որոշ չափով շրջում ձախ կողմի վրա։ Իսկ ձախ թեքվելիս այդ նույնը կատարելով՝ ձևիչը հողը մասնակիորեն շրջում էր աջ կողմի վրա։ Սեպով այսօրինակ կարգավորումը կատարվում էր այն հաշվով, որ լանջային տեղերը հորիզոնական ուղղությամբ վարելիս հողը շրջվեր դեպի ցած։ Այդ դեպքում մաճկալը ամեն մի ակոսաղլխին սեպի տեղը փոխում էր։ Ինչպես տեսնում ենք, ձևիչն այստեղ կատարում էր երկու դեր՝ կըտրում էր հողը և շրջում այն։

Այսպես, ուրեմն, Չորրորդ Հայքի հարորը ձևիչի շնորհիվ ձեռք էր բերել դեպի նախագութանը տանող նոր հատկանիշ, որը նախկին հայրենիքում չի ունեցել։

3. Պոնտահայերի երրորդ տիպի հարորը, որն առանձնապես լայն տարածված էր ծովափնյա հարթություններում և գետահովիտներում, հանդիսանում էր ուղիղ հարոր կոչվածը (տախ. I—5)։ Այն իր դերով մոտավորապես նման էր Վասպուրականում և Տուրուբերանում տարածված նախագութանին (տախ. I—6), թեև կառուցվածքով նույնը չէր։ Իսկ կառուցվածքով նման էր Չորրորդ Հայքի և Աղձնիքի հարորներին։ Ուղիղ հարորին ավելացել են երկու նոր տարրեր, որոնք հատուկ են նախագութաններին և գութաններին։ Նոր տարրերից մեկը խոփի աջ եզրի վրա ուղղահայաց դիրքով, մասամբ դեպի ետ շեղված, 15—20 սմ երկարությամբ կտրիչն էր, որը ձևիչի դեր էր կատարում։ Եթե մյուս խոփերը, օժտվելով լայն ականջներով, արմատները կտրատում էին հորիզոնական դիրքում, ապա այս հարորի խոփի աջ ականջին փոխարինող նոր մասը նույն դերը կատարում էր ուղղահայաց դիրքում և, միաժամանակ, ճեղքում հողաշերտը, թև-տախտակի հետ համագործակցելով նպաստում հողը դեպի ձախ շրջելուն։

Ուղիղ հարորի վրա երկրորդ նորությունը նրա լիարժեք թև-տախտակն է, որը համեմատվում է պատմական Հայաստանի շատ վայրերում տարածված նախագութանների թևերի հետ։ Բայց ի տարբերություն մյուս բոլոր թևերի տնդադրման, Պոնտոսի ուղիղ հարորի թևը ամրացվում էր գործիքի ձախ կողմին՝ հողը ձախ շրջելու համար։ Հարորի թրի և մաճի անցքը բացվում էր այն հաշվով, որպեսզի առատամի ձախ կողմը ավելի լայն հենարան ունենար թևի համար։ Թևի առջևի ծայրը հասնում էր առատամի աջ եզրին, որը նույնպես անսովոր էր, որովհետև բոլոր հայկական գութանների թևերի առաջածայրերը միանում էին թրին։

Պոնտոսի հայերի ուղիղ հարորն ստեղծվել է Չորրորդ Հայքի, Փոքր Հայքի և Աղձնիքի հարորների հիման վրա։ Նախկին հասարակ հարորը ժամանակի ընթացքում վեր է ածվել մի գործիքի, որը նախագութան անվանելը սխալ կլիներ։ Այս հարորը զարդացման աստիճանով գտնվում էր նախագութանի և զարգացած, անիվավոր գութանի միջնաստիճանում, թեև այն Պոնտոսի մանր հողակտորների պայմաններում հարմարեցված էր մի զույգ եզան ուժին։

Նախագութանի և գութանի միջնաստիճանում լինելը ուշագրավ հատկանիշ է, որը գիտված է նաև Մեծ Հայքի սահմաններում։ Այսպես օրինակ, Վանա լճի ավազանում, Կոգովիտում, Բզնունիքում, Տուրուբերանի Հարք գավառում և այլուր Պոնտոսի ուղիղ հարօրի համարժեք գործիքները հայտնի էին անճար գութան (տախ. I—6) անունով այն պատճառով, որ նախ, անիվազուրկ էին և ապա դրանք օգտագործում էին չունևոր խավերը։

Հայկական Պոնտոսում տարածված հարօրների զարգացմանը մասնակցել են այստեղ տեղափոխված տարբեր ազգագրական շրջանների հայերը։ Հարօրների երկրորդ (տախ. I—3) և երրորդ (տախ. I—5) տիպերը Չորրորդ Հայքի և Աղձնիքի հարօրների հետագա ինքնուրույն զարգացումն են հանդիսանում։ Այդ իմաստով էլ Պոնտոսի հարօրները չեն կարող մտնել Աղձնիքի կամ Չորրորդ Հայքի վարող գործիքների առանձին-առանձին խմբերի մեջ, իրրև նրանց անմիջական շարունակությունը։

Տարիներ առաջ, երբ Պոնտոսի հայերի վարող տեխնիկան տակավին չէր ուսումնասիրված, ըստ կառուցվածքի մեզ հայտնի էր հայկական վարող գործիքների վեց խումբ[13]։ Այժմ արդեն պարզ երևում է, որ ըստ կառուցվածքի Պոնտոսում մենք ունենք վարող տեխնիկայի մի նոր համալիր, որը պայմանական առումով կազմում է Հայաստանի նույն տեխնիկայի VII խումբը։

4. Տրապիզոնի շրջակա գյուղերում օգտագործվում էր նաև մի այլ արոր, դարձյալ հարօր անունով (տախ. I—7)։ Վերջինս Այրարատյան նահանգին հայտնի վեսկի կոչված արորի (տախ. I—8) վերասերումն էր։

Նշենք, որ Այրարատյան վեսկին, լինելով փափուկ դաշտերի արոր, բավական նուրբ կառուցվածք ունի։ Նրա վարիանտները Հայաստանի լեռնային վայրերում XIX դարում ստացել են կոպիտ տեսք և հարմարեցվել տեղանքին՝ առանց կառուցվածքային փոփոխության։ Իսկ Պոնտոս տեղափոխված այրարատյան նույն վեսկին, որն այնտեղ է անցել Արագածոտնի և Անի—Շիրակի գաղթականության միջոցով, տեղին հարմարեցվել է մաճի ձևը փոխելով։ Իսկ այդ մաճը, ինչպես պարզ երևում է, Չորրորդ Հայքի հարօրի մաճի ձևից է առնված։ Պոնտոսում այս տրապիզոնյան նորահայտ հարօրի հետագա զարգացման հետքերը տակավին չենք գտել։ Բայց տարակույս չունենք, որ այս գործիքը նույնիսկ միայնակ էլ ներկայացնում է հայկական վարող գործիքների VIII խմբի սկզբնավորումը։

Պոնտոսում հայերը և մյուս ժողովուրդները արորներով վարը կատարում էին մեկական զույգ եղներով։ Հավանորեն նախագութանին (տախ. I—5) լծելիս են եղել մեկից ավելի զույգ, որովհետև ձևիչավոր խոփը և տախտակե թևը դժվարացնում էին թե՛ հերկումը, և թե՛ ցանքի վարը։ Վարուցանքի ժամանակ մաճկալները գործածում էին Հայաստանում ամենուրեք հայտնի արոր։ սրբիչ (տախ. II—1), որը Պոնտոսում կոչվում էր նաև ջամաղ։ Արորների հետ այս գործիքն էլ մինչև 1930-ական թթ. վերջերը գործածվում էր Սև ծովի կովկասյան ափերի հայաբնակ վայրերում։

Համշեն-Տրապիզոնում վարած հողը հարթելու մեզ հայտնի միջոցը տափանն էր (տախ. II—2)[14]։ Դրան հարթավայրերում մի զույգ եզ էին լծում և

---

13 Նույն տեղում, էջ 46—66։

14 Տափանը Տրապիզոնում կազմվում էր 4 ձողերից։ Այս շրջանակը լցվում էր ճիպոտահյուսքով։ Լայնքը 60—70 և երկայնքը՝ 100—150 սմ էր։



Տախտակ 1

իբրև ծանրոց՝ վրան երկու երեխա նստեցնում։ Լանջային տեղանքում, ինչպես հավաստում է Բ. Թողաքյանը[15], տափանին եղներ լծել հնարավոր չէր այն պատճառով, որ սովորության համաձայն տափանումը կատարվում էր վերից վար ուղղությամբ։ Այդ պարագային տափանը մարդիկ էին քաշում. այս դեպքում էլ տափանին երեխաներ էին նստեցնում, իսկ վարից վեր՝ դատարկ ձգում։

Պոնտոսի հայաբնակ շրջաններում վարող տեխնիկային զուգակցում էին բրիչների մի քանի տեսակներ։ Թեք լանջերը և քարքարոտ հողամասերը վարող տեխնիկայի համար անմատչելի էին, ուստի բրիչային տեխնիկան շատ կարևոր դեր էր կատարում այդ հողամասերը փորելու և անտառահատական երկրագործության մեջ օգտագործելու տեսակետից։ Այդ գործիքներն էին՝ փորող երկժանիները, երկկողմանի և միակողմանի քլունդները, հողուրագները և կացինները։ Երկկողմանի բրիչները, որ հայտնի էին Ֆլունգ (տախ. II—4), հեռկի փետատ (տախ. II—6), Ֆլունգ-փետատ (տախ. II—7) և փետատ անուններով, ծառայում էին նաև վարելահողերի թփերի արմատները ոչնչացնելուն և բանջարաբոստանային կուլտուրաները բուկլից և քաղհան անելուն (հողուրագը տե՛ս տախ. II—8)։

Պոնտական երկկողմանի բրիչներն ունիվերսալ էին. դրանց մի բերանը ուրագի կամ կտուցի է նման, մյուսը՝ կացնի. առաջինով փորում են, իսկ երկրորդով՝ կտրում արմատները։

Պոնտոսում բահին փոխարինում էր լեխտոր անունով երկժանի բահը։ Վերջինս իր տարբեր փոփոխակներով լայն տարածում ուներ նաև Փոքր Հայքում և փոքրասիական հայկական գաղութներում (տախ. II, 9—10)[16]։ Բոլոր լանջային տեղերը և քարքարոտ հողերը, որոնք անմատչելի էին արորների համար, փորվում էին լեխտրներով։ Լեխտրով փորելը ծանր աշխատանք էր պահանջում, ուստի պոնտահայերը, պահպանած լինելով հարակաշային սովորությունները, համախմբվում, կոլեկտիվ կարգով այգիներ, բանջարանոցներ և եգիպտացորենի արտեր էին փորում։ Տեղ-տեղ փորում էին զույգերով. մեկը փորում էր, մյուսը պարանով ձգում, գուղձը շրջում։

1880-ական թթ. մինչև 1910-ական թթ. վերջերը տեղի ունեցած արտագաղթի հետևանքով Պոնտոսի հայությունն իր վարող և փորող տեխնիկան նույնությամբ տեղափոխեց Աջարիայի, Աբխազիայի, Սոչիի և Տուապսեի ծովափնյա շրջանները։ Այդ վայրերում պոնտական գործիքները փոփոխությունը-

15 Բ. Թողաքյանը, որպես տրապիզոնցի, պոնտահայության և համշենահայության պատմության ու կենցաղի քաջատեղյակներից է։ Երկար տարիներ նա հավաքել է կենցաղային առարկաներ՝ պղնձի ու փայտե ամաններ, գգեստներ, լուսանկարներ, աշխատանքի գործիքներ, այդ թվում՝ արորի նմուշներ և այլն, որոնք նյութական մշակույթի ուսումնասիրման համար կարևոր նշանակություն ունեն։ Մեր խորհրդով նա վերջին 5—6 տարիների ընթացքում գրի է առել պոնտահայության աղգագրությունը և շարունակել է կենցաղային իրերի հավաքման գործը։

16 Լեխտրի հասարակ տեսակը երկաթե երկժանիներից տարբերվում է խիստ հաստահեղությամբ (II—10)։ Նրանով փորում էին ոտքը ուսին դնելով։ Իսկ մյուս փոփոխակը մեծ տարբերություն ունի. սա խողովակավոր կոթառի փոխարեն ունի արորի խոփի խոփառի ձև, որի մեջ կոթը մտնում է առատամի նման։ Կոթը կուզ ունի, որի վրա դրվում էր սեղմող ոտքը։ Փորելիս աշխատավորը զույգ ձեռքերով բռնում էր կոթի վերին ծայրին ամրացված հորիզոնական բռնիչից, կոթը առաջ էր տանում և ապա լեխտրի ատամները խրում հողի մեջ. այնուհետև կոթը ձգում էր դեպի իրեն ու շրջում գուղձը։

ներ չկրեցին այն պատճառով, որ բնակլիմայական պայմանները նույնն էին, ինչ Պոնտոսում։ Տեղափոխված հիշյալ տեխնիկան տարածում գտավ նաև տեղացիների՝ աջարացիների, աբխազների և այլոց մեջ։ Առանձնապես լավ ընդունելություն գտավ լեխտրը։

Այսպիսով, պարզվում է, որ Հայկական լեռնաշխարհի տարբեր ազգագրական շրջաններից Պոնտոս տեղափոխված հայկական զանգվածները ավելի քան մեկ հազարամյակի ընթացքում որքան պահպանել, նույնքան էլ փոփոխության են ենթարկել երկրագործական վարող տեխնիկան։

Պոնտոսի հայերի վարող գործիքների երկու տարբեր ձևերը, որ մենք բնորոշում ենք իբրև VII և VIII խմբեր, Համշենի և Տրապիզոնի հայերի հազարամյա պատմության արդասիքն են հանդիսանում։

ОРУДИЯ ПАХОТЫ У ПОНТИЙСКИХ АРМЯН

Доктор историч. наук В. А. БДОЯН

(Резюме)

Переселение армян на юго-западное побережье Черного моря началось еще в первые века до н. э. В средние века, под натиском персидско-арабских притеснений и благодаря поощрению византийских правителей, это переселение достигло крупных размеров, особенно в VI—VIII вв. В те времена обработка небольших земельных участков местными племенами производилась только мотыгами.

Из Алдзника, Четвертой Армении и Арарата армяне перенесли в районы Понта известные в своих областях рала (табл. I—1, 3, 5, 7), которые со временем претерпели известное развитие: на одной из них образовался резак (табл. I—3). На основании форм первичных рал Четвертой Армении, Малой Армении и Алдзника формировался особый вид орудия, который в смысле развития занимает среднюю ступень между прототипом плуга и колесным плугом (табл. I—5).

С пахотными орудиями сочетался ряд понтийско-армянских мотыг (табл. II, 4—10), прообразы которых и по сей день бытуют в значительной части Армянского нагорья. Две из них представляли толстые двузубья, известные под названием лехтр (табл. II—9, 10), которые выполняли функции заступа.

Техника пахоты и рытья после геноцида армян в 1915 г. перешла на советские берега Черного моря, где и доныне проживают понтийские армяне.